



Հայոց լեզու

10-րդ դասարան ընդունվողների համար, 2016-2017 ուստարի

1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողնված տառերը և կետադրել (5, ուղղ.-
1, կետ. -0.5):

Երեկոն իր թներն էր մեղմ...րեն փռում խոն...ացած Անի քաղաքի վրա:
Ծանր դողանջում էին եկեղեցու արծաթահինչ...ն զանգակները: Փողոցների անլռելի
աղմուկը մի պահ դա...ար էր առնում փակվում էին դեր...ակների ու կոշկակարների
ար...եստանոցները դրամափոխների ոսկերիչների ու գոհարավաճառների
կրպակների դռները որոնք ամեն կողմից ակ...նթարթորեն ամրացվում էին նաև
երկաթե խոշոր նի...երով: Առաքելոց եկեղեցու առջ...ով պարիսպներից դուրս
գտնվող ի...նանների բակերն էին քշում այդ օրը չվաճառված գրաստների մատաղ
նժույ...ների ու...տերի ու ավանակների սովա...ուկ երամակները: Ձիերի պայտերը
սալահատակի ցցված քարերին դիպչելիս կայծեր էին ար...ակում և խր...նած
կենդանիները նետվելով այս ու այն կողմ խանգարում էին եր...նեկը:

Եկեղեցի շտապող քաղաքացիները թեքվում էին գլխավոր լայն փողոցից և
խառնվելով քաղաքի շրջակայ...ում ապրող ար...եստավորների օրավարձով
աշխատողների ու մանր վաճառականների խմբերին ճանապար...ով շարունակում
էին բարձրանալ ան...ուկ ու լռելյայն նր...անցքներով:

2. Տեքստից գտնել և գրել տրված բառերի հոմանիշները (3, -0,5):

Արևամուտ -----

կացարան-----

հոգնել -----

պատնեշ-----

աղաղակ-----

արահետ-----

4. Տեքստից դուրս գրել համանուն ունեցող երկու բառ, դրանց տարբեր իմաստներով կազմել բառակապակցություններ (2, -0,5):

5. Տեքստից դուրս գրել հնչյունափոխության տարբեր դեպքեր ունեցող չորս բառեր, բառակազմորեն վերլուծել, նշել հնչյունափոխությունը (2, -0,5):

8. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2, -0,5):

ա) Ուսանողները (երախտիքի, երախտագիտության) խոսք ասացին իրենց սիրելի դասախոսին:

բ) Նա սիրով ընդունեց (հրավերը, հրավերքը)՝ մասնակցելու այդ տոնակատարությանը:

գ) Նիստին ներկա էին (տնօրենության, տնօրինության) անդամներից մի քանիսը:

դ) Թեև այդ հարցն ինձ չէր (վերաբերում, վերաբերվում), բայց որոշեցի մասնակցել քննարկմանը:

ե) Աղջկա (անստույգ, անըստգյուտ) և եթերային գեղեցկությունը գրավեց բոլորին:

զ) Բոլորը անակնկալի եկան (վերահաս, վերահասու) աղետից:

9. Գրել շարադրություն «Եթե նկարիչ լինեի», «Լավ է ուշ, քան երբեք» վերնագրերից մեկով (6միավ., ուղղ. – 1, կետ -0,5):



